Եւ նորա մեկնեալ անտի եկն առ Գրիգոր Պատրիարք հարցանել զպատճառն իրրեւ յանգէտս, եւ լուեալ 'ի նմանէ զարժանաւորն մեկնեցաւ անտի։

Յետ այնորիկ չոքաւ Գրիգոր Պատրիարք հանդերձ իւրովքն 'ի դատարան, ուր էին ժողովեալ բազմութիւնք այլազգեաց և քաղաքապետն. կոչեցան անդ և գլխաւորք Յունաց եւ Լատինաց, ընթերցան առաջի նոցա զառաջին հրովարտակն Հայոց և զգիրս պատմութեան Արաբացւոց (Թարիխ էլ Համպելի). և ամենեքեան վկայ կացին, թէ ճշմարիտ են բանք հրովարտակաց և պատմութեանն, եւ վանք Ս. Յակոբայ սեփհական է Հայոց, ուր վերստին կընքեցան հանրագրութիւնք կրկին, և Գաբրիէլ վարդապետ փոխանորդ Գրիգորի չոքաւ 'ի Դամասկոս և էառ գիր 'ի Կուսակալէն. գրեաց և առանձին քաղաքապետն Երուսաղէմի գիր ամբաստանութեան զազգէն Յունաց, ուր ասէ. անհետ արարին յԵրուսաղէմէ զՍրսպս, զՎրացիս և զԵթովպացիս, և յանիրաւի տիրեցին վիճակաց նոցին, որոց անկ էր տիրել թագաւորին. եւ թէ՝ յառաջագոյն չորս գլխաւոր ազգ էին 'ի քաղաքիս, յորոց վերայ հաւասար բաժանէր տուրք Տէրութեան. իսկ Յոյնք տիրեալ վիճակաց նոցին հալածելոց, զբաժին հարկն նոցա ոչ կամին հատուցանել, որ մինչեւ ցայժմ Հայք և Լատինք պահանջեն 'ի նոցանէ։ Զայսոսիկ գրեանս արար Գրիգոր երկու ծրար, զմին առաքեաց 'ի ցամաքէ և զմիւսն 'ի ծովու 'ի Կոստանդինուպոլիս, և Գաբրիէլ վարդապետ դարձաւ յԵրուսաղէմ։ Ի հասանելն գրոց՝ մատուցին Հայք 'ի Դուռն, և նոցա ընթերցեալ, յայտ արարին Յունաց զբովանդակ միտս նոցին։ Տագնապեցան առ այս Յոյնք, եւ կասկածէին իսկ զի մի գուցէ այլ խնդիր յուղեսցի, և ինքեանք վրիպեսցին 'ի նըպատակէ իւրեանց։ Նմին իրի սկսան դեգերել 'ի դրունս իշխանաց, և հազիւ ուրեմն կարացին խափանել եւ տալ պահել զգրեանս Հայոց։

Եւ ապա ետուն գրել նոր հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, չտալ երբէք Հայոց և Յունաց հանրագրութիւն, և կամ որ և իցէ գիր. և եթէ յանդգնեսցի ոք խնդրել, կալեալ գիցի 'ի բանտի, և ազդ առնել 'ի Դուռն, զի սահմանեսցի պատիժ նորին։